Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող 95/12/ԵՀ հրահանգը փոփոխելու և լրացնելու մասին Հանձնաժողովի 1996 թվականի դեկտեմբերի 17–ի 96/89/ԵՀ հրահանգը կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր, L 338, 28.12.1996թ. էջ 0085 - 0085

Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող 95/12/ԵՀ հրահանգը փոփոխելու և լրացնելու մասին Հանձնաժողովի 1996 թվականի դեկտեմբերի 17–ի 96/89/ԵՀ հրահանգը կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Կենցաղային տեխնիկայի կողմից սպառվող էներգիայի և այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման և արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների միջոցով նշում կատարելու մասին» Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգը, մասնավորապես դրա 9 և 12–րդ հոդվածները,

հաշվի առնելով Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի մայիսի 23–ի 95/12/ԵՀ հրահանգը կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման մասին,

քանի որ գոյություն ունեցող չափման մեթոդները և տվյալները թույլ չեն տալիս իրականացնել լվացքի մեքենաների համապատասխան պիտակավորում առանց ջուր տաքացնելու, և քանի որ նման սարքերը նշված պատճառով չեն մտնում 95/12/ԵՀ հրահանգի կարգավորման դաշտի մեջ,

քանի որ սույն Հրահանգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են 92/75/ԵՏՀ հրահանգի 10–րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

95/12/ԵՀ հրահանգի 1(1) հոդվածով այդ հրահանգի կարգավորման դաշտի մեջ չմտնող կենցաղային լվացքի մեքենաների տեսակների սահմանված ցուցակի մեջ ավելացնել հետևյալ կետը.

«– ջուրը տաքացնելու հնարավորություն չունեցող լվացքի մեքենաները՝ մինչև 1998 թվականի հունիսի 30-ը:»

Հոդված 2

1. Անդամ պետությունները պետք է ընդունեն և հրապարակեն սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական ակտերը մինչև 1997 թվականի ապրիլի 15–ը: Նրանք պետք է այդ մասին անմիջապես տեղեկացնեն Հանձնաժողովին: Նրանք պետք է կիրառեն այդ դրույթները 1997 թվականի մայիսի 15-ից:

Անդամ պետությունները, սույն ակտերն ընդունելիս, պետք է ապահովեն, որ դրանք հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով իրենց պաշտոնական հրապարակման պահին: Նման հղում կատարելու կարգն ընդունվում է անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն ազգային իրավունքի ակտերը, որոնք նրանք ընդունում են սույն հրահանգով կարգավորվող ոլորտներում:

Հոդված 3

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց 20 օր հետո:

Հոդված 4

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1996 թվականի դեկտեմբերի 17-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Քրիստոս ՊԱՊՈՒՏՍԻՍ

Հանձնաժողովի անդամ

(1) ՊՏ, թիվ L 297, 13.10.1992թ., էջ 16:

(2) ՊՏ, թիվ L 136, 21. 6. 1995թ., էջ 1: